ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Վ. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

Լուծելով նոր հասարակության ստեղծման և համակողմանիորեն կատարելագործման պրոբլեմները, կոմունիստական կուսակցությունը միշտ էլ կարևորել է մարդկային գործոնի դերը։ Այն անկյունաքարային հիմք է հանդիսացել ԽՄԿԿ XXVII համագումարի տեսական դրույթների առաջադրման և քաղաքական ստրատեգիայի մշակման համար։ «Նախատեսված խնդիրների հաջող լուծումը,— ընդգծված է ԽՄԿԿ ծրագրի նոր խմբագրության մեջ,— կուսակցությունը կապում է մարդկային գործոնի դերի բարձրացման հետ։ Սոցիալիստական հասարակությունը չի կարող արդյունավետորեն գործել, չգտնելով կյանքի բոլոր ոլորտներում մասսաների ստեղծագործական գործունեության զարգացման նոր ուղիներ»[1]։ Ներկա պայմաններում կոմունիստական դաստիարակությունը նոր իմաստ և որակ է ձեռք բերում։ Աճող սերընդի ռեալ դաստիարակության ուղղությամբ կուսակցության նպատակուղղված աշխատանքն ապահովում է բարոյաքաղաքական պրոցեսների հետագա առաջընթաց զարգացումը, ապացուցում է մարքսիզմ-լենինիզմի մարդասիրական իմաստը և կենսահաստատ ուժը։

Մարքսիզմի դասականները ապացուցել են երիտասարդության նշանակալից դերը հասարակության մեջ, հիմնավորել են նրա սոցիալական հեռանկարները հեղափոխական վերափոխումների ճակատագրի համար։ Նրանք առաջինը երիտասարդության պրոբլեմին մոտեցան հասարակական առաջընթացի տեսանկյունից և ցույց տվեցին, որ աճող սերնդի դերի ճիշտ ըմբռնումը բանվոր դասակարգի ձևավորման և ինքնագիտակցության զարգացման կարևորագույն ցուցանիշներից է։ Դեռևս 1840 թ. Ֆ. Էնգելսը գրել է. «Մեր ապագան, ավելի քան երբևէ, կախված է աճող սերնդից, քանի որ նրան կվիճակվի լուծելու ավելի հարաճուն հակասությունները»[2]։ Ավելի ուշ՝ 1866 թ. Կ. Մարքսը նշում էր, որ «առավել առաջավոր բանվորները լիովին գիտակցում են, որ իրենց դասակարգի և, հետևապես, մարդկության ապագան ամբողջովին կախված է աճող բանվորական սերնդի դաստիարակությունից»[3]։

Իր հեղափոխական գործունեության սկզբից Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն է դարձրել երիտասարդության հետ տարվող աշխատանքների հարցերին։ Հասարակական առաջընթացում երիտասարդության դերի և նրա դաստիարակության խնդիրներին են նվիրված Վ. Ի. Լենինի երկու հարյուրից ավելի աշխատություններ, ելույթներ և նամակներ։ 1906 թ., պատասխանելով մենշևիկ Լարինին, որը դժգոհ էր այն բանից, որ բոլշևիկները մեծ տեղ են տալիս աշխատավոր երիտասարդությանը, Վ. Ի. Լենինը հիշեցնում էր Ֆ. Էնգելսի խոսքերը. «Մենք ապագայի կուսակցություն ենք, իսկ ապագան երիտասարդությանն է պատկանում։ Մենք նորարարների կուսակցություն ենք, իսկ նորարարների հետևից միշտ ավելի սիրով երիտասարդությունն է գնում։ Մենք հին նեխվածքի դեմ անձնուրաց կերպով պայքարող կուսակցություն ենք, իսկ անձնուրաց պայքարի միշտ առաջինը կգնա երիտասարդությունը»[4]։

---

[1] *Սովետական Միության կոմունիստական կուսակցության Ծրագիրը։ Նոր խմբագրություն։ Ընդունված ՍՄԿԿ XXVII համագումարի կողմից, Երևան, 1986, էջ 33։*

[2] К. Маркс, Ф. Энгельс. Из ранних произведений. М., 1956, с. 378.

[3] *Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1973, էջ 103։*

[4] *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 14, էջ 204։*

Այսօր, երբ կուսակցության առջև ծառացել են մեր երկրի հասարակա-կոն-քաղաքական և տնտեսական կյանքի արմատական հեղափոխական վերափոխման վիթխարի խնդիրներ, լենինյան դրույթներն ավելի ու ավելի այժմեական են հնչում։ Միանգամայն օրինաչափորեն ԽՄԿԿ Կենտկոմի հունվարյան (1987 թ.) պլենումն ընդգծեց, որ երիտասարդ սերնդի դիրքորոշման հարցն ունի քաղաքական հսկայական նշանակություն։ Պլենումում ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը նշեց. «Մենք կարող ենք հպարտանալ մեր երիտասարդներով, պատշաճն ենք մատուցում նրանց աշխատանքին. սա թե՛ փաստորեն է ճիշտ և թե՛ քաղաքականապես։ ...Կուսակցական կազմակերպությունները, նրանց կոմիտեները, կոմերիտմիությունը պետք է երիտասարդ սերնդի առջև լայնորեն բացեն հեռանկարը, այնպես անեն, որ երիտասարդությունը գործնականորեն դառնա վերափոխումների եռանդուն մասնակիցը»[5]։ 1987 թ. մեր երկրի երիտասարդության շրջանում անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երիտասարդության 70 %-ը բարձր է գնահատում վերակառուցման քաղաքականությունը[6]։ Այս տեսանկյունից կարևոր նշանակություն է ձեռք բերում երիտասարդության և առաջին հերթին աշխատող երիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացումը, քանի որ հանձինս աշխատող երիտասարդության կուսակցությունը տեսնում է հսկայական ստեղծագործ ուժի, բանվոր դասակարգի և ողջ աշխատավորության արժանի ժառանգորդի ու փառավոր ավանդույթների շարունակողի, սոցիալիզմի պայմաններում բանվորական ուժի հիմնական և դինամիկ զարգացող համալրողի։

Աշխատող երիտասարդություն ասելով հասկանում ենք հանրօգուտ աշխատանքում ներգրավված այն պատանիներին ու աղջիկներին, որոնց տարիքային սահմանները ընկած են 16—30-ի շրջանում։ 16-ամյա հասակը, երբ պատանիների ու աղջիկների կյանքում անցում է կատարվում մանկությունից պատանեկություն, կարելի է ընդունել որպես աշխատող երիտասարդության տարիքային սահման։ 30 տարվա սահմանագծին նրանք մեծ մասամբ հասնում են տնտեսական ինքնուրույնության և սոցիալական հասունության, ընդգրկվում են արտադրական և հասարակական կառավարման գործերում, ընտանիք են կազմում և այլն։ Այս տարիներն ընդունված է համարել երիտասարդության վերին տարիքային սահման։

Մինչև 30 տարեկան երիտասարդները 1970 թ. մարդահամարի տվյալներով կազմում էին ԽՍՀՄ-ի բնակչության կեսից ավելին[7], իսկ 1981 թ. ԽՍՀՄ բնակչության 266,6 միլիոնից ավելի քան 70 միլիոնը 14—30 տարեկան էին[8]։ Արդեն 1976 թ. մեր երկրում աշխատանքի ոլորտում զբաղված էին ավելի քան 30 միլիոն երիտասարդ բանվորներ, կոլտնտեսականներ, ծառայողներ։ Երիտասարդությունը կազմում էր բանվոր դասակարգի կեսից ավելին, երկրի մտավորականության համարյա կեսը[9]։

1970-ական թվականներին աշխատող երիտասարդության օրինաչափ աճ է նկատվում նաև մեր հանրապետությունում։ Դեռ 1970 թ. Լենինականի յուրաքանչյուր 1000 խառատից 800-ը, ջուլհակներից 650-ը, հաստոցաշինարարներից ու մեքենաշինարարներից 670-ը երիտասարդներ էին։ Եթե 1972 թ. աշ-

---

5 ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի նյութերը (1987 թ. հունվարի 27—28-ին), Երևան, 1987, էջ 51—52։

6 Аргументы и факты, 1988, № 2.

7 Итоги Всесоюзной переписи населения СССР в 1970 г., т. I. М., 1972, с. 13.

8 Правда, 24. I. 1981.

9 XXV съезд КПСС и актуальные проблемы коммунистического воспитания. По материалам всесоюзной научно-практической конференции в Москве (июнь 1976 г.). М., 1976, с. 7.

իատող երիտասարդության թիվը հանրապետությունում հասնում էր գրեթե 274 հազար մարդու, ապա 1980 թ.՝ ավելի քան 297 հազարի[10]։

Ստեղծելով նոր հասարակություն, կուսակցությունն առաջնակարգ տեղ է տալիս աշխատավորների ստեղծագործական ակտիվության բարձրացմանը, քանի որ «սոցիալիզմը,— ինչպես նշել է Վ. Ի. Լենինը,— կառուցվել կարող է միայն այն ժամանակ, երբ 10 և 100 անգամ ավելի լայն մասսաներ, քան առաջ, իրենք կսկսեն պետություն կառուցել և տնտեսական նոր կյանք կառուցել»[11]։

Կուսակցությունը սոցիալապես ակտիվ անհատի ձևավորման գործում կարևոր նշանակություն է տալիս առանձնապես երիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը, քանի որ այն երիտասարդության քաղաքացիական հասունության բարձրացմանը, քանի որ այն երիտասարդության քաղաքացիական հասունության վկայությունն է և այս որակով հանդես է գալիս որպես երիտասարդության կոմունիստական դաստիարակության կարևոր նպատակներից մեկը։ Երիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվության մեջ իր ճիշտ արտահայտությունն է գտնում գաղափարական համոզվածությունը, սոցիալիզմի, մեր դարաշրջանի ամենաառաջավոր գաղափարների ակտիվ մարտիկների շարքերում գտնվելու ձգտումը։

Երիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացումը սոցիալիզմի զարգացման և կատարելագործման օբյեկտիվ օրինաչափությունն է։ Այն մեծապես պայմանավորված է նոր հասարակության մասշտաբների և խնդիրների անընդհատ աճով ու բարդացմամբ։ Եվ օրինաչափ է, որ սոցիալ-տնտեսական զարգացման մեջ լճացման ու բացասական երևույթների հաղթահարման և վերակառուցման բարդ գործում կուսակցությունը մեծ տեղ է տալիս երիտասարդությանը։ «Ներկա սերնդին բաժին է ընկել երկիրը սոցիալական առաջադիմության նոր բարձունքների հասցնելու, մարդու զարգացման, նրա ստեղծագործական ընդունակությունների իրացման հսկայական հնարավորություններ բացելու մեծ առաքելություն»[12],— ընդգծում էր Մ. Ս. Գորբաչովը՝ Էստոնիայի լենինյան կոմերիտմիության XX հաամագումարի բացման ժամանակ ունեցած ելույթում։

Սոցիալիզմի ժամանակ երիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվությունը բարձրանում է դասակարգերի և սոցիալական մյուս խմբերի հասարակական-քաղաքական ակտիվության հետ սերտ փոխկապակցվածության պայմաններում, այն տնտեսական, քաղաքական, սոցիալ-կուլտուրական նպատակներին հասնելու օբյեկտիվ շահագրգռվածության հիմքի վրա, որոնք ընդհանուր են բոլոր դասակարգերին և խմբերին։

Հետևաբար, երիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվության կարևորագույն օրինաչափությունը նրա պայմանավորվածությունն է սոցիալիստական հասարակության հիմնական տնտեսական և քաղաքական բնութագրերից։ Այստեղից էլ հասարակական-քաղաքական ակտիվությանն աստիճանը սերտորեն կապված է մի շարք օբյեկտիվ նախադրյալների և պայմանների ստեղծումից, որոնց շարքը առաջին հերթին դասվում են աշխատող երիտասարդության կրթական, սոցիալ-կուլտուրական և գաղափարաբարոյական մակարդակի բարձրացման ուղղությամբ կուսակցական կազմակերպությունների աշխատանքները։

Ժամանակակից փուլում գիտատեխնիկական հեղափոխության համակողմանի լայն ծավալումը բարձր պահանջներ է առաջադրում աշխատավորների հանրակրթական մակարդակի նկատմամբ, որը բանվորներին հնարավորություն է ընձեռում տիրապետելու գիտության կարևորագույն նվաճումներին,

---

10 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 48, ց. 48, գ. 3, թ. 23։

11 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 528։

12 Սովետական Հայաստան, 21.II.1987։

կառավարելու ժամանակակից տեխնիկան և տեխնոլոգիան։ Այդ առումով Կ. Մարքսը նշում էր, որ «մարդկային ընդհանուր բնությունն այնպես վերափոխելու համար, որ նա աշխատանքի մի որոշ ճյուղի մեջ, պատրաստություն և հմտություն ձեռք բերի, զարգացած և առանձնահատուկ աշխատուժ դառնա, պահանջվում է որոշակի կրթություն»[13]։

Հանրակրթական մակարդակի բարձրացումը աշխատող երիտասարդության կուլտուր-տեխնիկական մակարդակի աճի կարևորագույն գործոններից և հիմքերից է, քանի որ այն ռեալ նախապայման է մասնագիտական գիտելիքների արագ նորացման, բարձր որակավորման և ինժեներատեխնիկական գիտելիքների ձեռքբերման համար, աշխատող երիտասարդությանը հնարավորություն է ընձեռում ակտիվ գործունեություն ծավալելու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում։ «Անգրագետ մարդը,— գրել է Վ. Ի. Լենինը,— քաղաքականությունից դուրս է, նրան նախ պետք է այբուբեն սովորեցնել։ Առանց դրա չի կարող քաղաքականություն լինել»[14]։

Վերլուծելով աշխատող երիտասարդության կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ 1971—1980 թթ. ՀԿԿ-ի գործունեությունը, գալիս ենք այն եզրահանգման, որ կուսակցական կազմակերպությունները թույլ են տվել մի շարք սխալներ և բացթողումներ, դեռ ավելին, շատ դեպքերում դրսևորել են անհոգ և անտարբեր մոտեցում։ Այսպես, եթե 1970 թ. մեր հանրապետությունում 16—29 տարեկան 117 հազար մարդ չուներ միջնակարգ կրթություն և չէր սովորում, որոնց մեծ մասը աշխատող էին, ապա 1980 թ. այդ թիվը կրճատվում է ընդամենը երկու հազարով և հասնում է 115 հազարի[16]։ Կապված տնտեսական մեխանիզմի արգելակման և լճացման հետ, անցած տարիներին լուրջ տեղաշարժեր չեն նկատվել նաև աշխատող երիտասարդության սոցիալ-կուլտուրական պայմանների բարձրացման ուղղությամբ, իսկ 1988 թ. դեկտեմբերի 7-ին հանրապետության հյուսիսային շրջաններում տեղի ունեցած տարերային աղետն ավելի խորացրեց այդ պրոբլեմը։

Հարկ է նաև նշել, որ սոցիալ-կուլտուրական շինարարության, երիտասարդության ազատ ժամանակի կազմակերպման հարցերը ոչ միայն մեր հանրապետությունում, այլև ամբողջ երկրում լուծված չեն և լուրջ ուսումնասիրության առարկա են։ Այսօր ԽՍՀՄ-ում յուրաքանչյուր 100 երիտասարդ ընտանիքներից 89-ը ունի բնակարանային դժվարություններ ու երիտասարդներն աշխատանքի բնույթը և մասնագիտությունը փոխում են 70 %-ով բնակարանային պրոբլեմից դրդված, երիտասարդների 60 %-ն ազատ ժամանակն անցկացնում է տանը, որը կոչվում է պասսիվ հանգիստ[16]։

ԽՄԿԿ-ի բազմաբնույթ գործունեության բաղկացուցիչ մասն է երիտասարդության կոմունիստական դաստիարակության կուսակցական ղեկավարությունը։ 1970—1980-ական թվականների Հայաստանի կուսակցական կազմակերպությունների փորձի վերլուծությունը հանգեցնում է այն հետևության, որ շատ կազմակերպություններ չէին բարձրացնում յուրաքանչյուր օղակի պատասխանատվությունն աշխատող երիտասարդության մեջ ակտիվ կենսադիրքի ձևավորման, աշխատանքային և հասարակական պրոցեսում նախաձեռնության դրսևորման, հասարակության բոլոր գործերում գիտակցական մասնակցություն ցուցաբերելու ուղղությամբ։ Նրանք ըստ ամենայնի ուշադրություն չէին դարձնում աշխատող երիտասարդության տնտեսագիտական և քաղաքական կրթության կազմակերպմանը, որը հիմնականում կրում էր ձևական բնույթ։ Մի շարք կուսակցական կազմակերպությունների աշխատանքում հեռացում էր նկատվում կյանքի իրական հարցադրումներից, գաղափարարարոյական աշխատանքները կրում էին ցուցադրական և մակերեսային

---

13 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, գ. 1, Երևան, 1954, էջ 182—183։

14 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 210։

15 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 60, գ. 20, թ. 7։

16 Аргументы и факты, 1987, № 1, с. 2—3.

բնույթ։ Գաղափարադաստիարակչական աշխատանքի ազդեցության նվազումը բացատրվում էր նաև գաղափարական, պրոպագանդիստական կադրերի ոչ բավարար բարձր մակարդակով։ Էկոնոմիկայի փակուղային վիճակը հնարավորություն չէր ընձեռում գաղափարական աշխատանքին տալու տնտեսական և սոցիալական հիմնավորում։ Նման պայմաններում երիտասարդության որոշ մասի մեջ նկատվում էր գաղափարաբարոյական ճգնաժամ, հասարակություն էին ներթափանցում սոցիալիզմին խորթ և հակոտնյա դրսևորումներ։ Իսկ այդպիսի պայմաններում, բնականաբար, գաղափարաբարոյական աշխատանքը չէր կարող արդյունավետ լինել։ Ավելացնենք նաև, որ վիճակն վատթարացել է վերջին տարիներին. ԽՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1987 թ.) պլենումում նշվեց, որ «հանրապետությունում գաղափարաբարոյական ոլորտում ստեղծվել է տագնապալի վիճակ»[17]։

Այսօր, երբ կուսակցությունը մշակել է երկրի կյանքի բոլոր կողմերի արմատական հեղաբեկման խորապես հիմնավորված ստրատեգիական կուրս, անցյալի սխալների ճիշտ և օբյեկտիվ հաշվառումը, սթափ գնահատումը կարևոր նշանակություն ունի հանրապետության կուսկազմակերպությունների մարտունակությունը բարձրացնելու գործում։ Այն հնարավորություն կտա աշխատող երիտասարդությանը մասնակից դարձնել ՀԽՍՀ-ի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր կողմերի արմատական վերաձևմանը և վերակերտմանը, հասարակությանը լիարժեքորեն ի սպաս դնելու նրա եռանդը, անսպառ հասարակական-քաղաքական ակտիվությունը։

ԽՄԿԿ-ի ղեկավարությամբ խորհրդային ժողովուրդն աշխատում է կուսակցության XXVII համագումարի, ԽՄԿԿ Կենտկոմի ապրիլյան (1985 թ.), հունվարյան (1987 թ.), հունիսյան (1987 թ.) պլենումների և XIX համամիութենական կուսակցական կոնֆերանսի որոշումների կենսագործման ուղղությամբ։ Խորհրդային երիտասարդությունը արժանի և ամենանշանակալի ավանդ է ներդնում այդ ստեղծագործ աշխատանքում։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախօրյակին կայացած կուսակցության VI համագումարում Վ. Ի. Լենինը հարց դրեց երիտասարդությանը ներգրավել հեղափոխության կողմը, որպեսզի տեղի ունենա բոլոր հեղափոխական ուժերի համախմբում։ Այդպես է դրվում հարցը նաև այսօր. ներգրավել, նվաճել երիտասարդությանը վերակառուցման կողմը։

ПЕРЕСТРОЙКА И ПОВЫШЕНИЕ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ АКТИВНОСТИ ТРУДЯЩЕЙСЯ МОЛОДЕЖИ

В. С. ГАЛСТЯН

Резюме

В деле создания объективных условий и предпосылок общественно-политической активности трудящейся молодежи важное значение имеет повышение ее образовательного, социально-культурного и идейно-нравственного уровня. Анализ опыта работы партийных организаций республики в 70-х и в первой половине 80-х гг. показывает, что в этой области в основном господствовали формализм и показуха. Сегодня, в период глубокой революционной перестройки всего общества, развитие активности молодежи, и в частности трудящейся молодежи, приобретает решительное значение.

---

17 ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը (25—26 հունիսի 1987 թ.), Երևան, 1987, էջ 23։